

ԿՐՈՆԱԿԱՆ

ՆԵՐԲՈՂ ԱՍՏՎԱԾԸՆԿԱԼ ՍՈՒՐԲ ԽՍԶԻ

Օրհնված ես, աստվածազարդ Քրիստոսով պսակված սուրբ փայտ, որ միայն անշունչների և շնչավորների, ապրողների և անկենդանների մեջ՝ անճառելի շնորհին արժանանալով փառավորվեցիր, որի համար մտավոր և բանավոր էակներից պահանջում ես կամավոր երկրպագություն։

Օրհնված ես, Քրիստոսով պսակված սուրբ փայտ, որ երկրի վրա բուսնելով, գերագույն երկնքի կամարների ծայրում արձակվելով բարձրացար՝ անկրելին քո վրա կրած պտուղ բերելով, երկինքն իսկ մեկ անգամից և երկնքի ու երկրի միջոցները լցրիր, որ՝ Իսրայելի ազգի մեջ ծաղկեցիր և քո պտուղներով ամբողջ տիեզերքը լցվեց։

Օրհնված ես, սուրբ փայտ, որովհետև ինչպես առաջին փայտը՝ գեղեցիկ և քաղցրահամ պտուղով մահվան առիթ հանդիսացավ ադամածին կույսը խաբելով, կուսածին Ադամը դառն ճաշակը առած, մարդկանց մեջ կյանքն աղբերացրեց։

Օրհնված ես, սուրբ փայտ, ամպատեսիլ սյուն, որ անկրելի լույսը և հուրը քո վրա կրելով, քեզ հետևողներիս առաջնորդում ես դեպի երկնային քաղաքի մշտնջենավոր կյանքը և գմեզ լուսավորյալ ես պահում։

Օրհնված ես, սուրբ փայտ, իմանալի տապանակ, երկնային մանանայով լցված ոսկի սափոր և հրաշալեր գավազան՝ ծաղկով պայծառացած, միանգամայն երկու տախտակներ՝ մարմինն ու հոգին իրար ադուցող, հինգ զգայարանքներով, որոնց վրա Բանն Աստված անճառելիորեն և կատարելապես դրոշմվեց, որ՝ մի և նույն ինքն տիրոջ սուրբ մարմինը՝ աստվածության հետ միավորված՝ քո վրա կրեցիր։

Օրհնված ես, սուրբ փայտ, իմանալի քարեղեն և քառանկյուն տախտակ, որի վրա ճշմարիտ աստվածաճանաչությունը տասնարանյա մատով դրոշմվեց Աստուծու կողմից, այլ մեկ և նույն անպարագիր Աստվածը խոսքով երևալով, փոխանակ Սինայից տրվելու՝ բովանդակ երկրի Սիոնից շնորհվեց։

Օրհնված ես, սուրբ փայտ, իմանալի գավազան՝ որ չոր լինելով հանդերձ, ոչ թե արքայական կաղին բուսցրիր, այլ բոլորի թագավորը, ծաղկեցիր որպես անթառամ և երկնային ծաղիկ, և ոչ այնչափ միայն, այլ նաև քո ծայրը բխած երևաց փրկական ջրի և արյան կենդանի աղբյուրը, որով ամբողջ տիեզերքը առհասարակ լցվեց։

Օրհնված ես, սուրբ փայտ, իմանալի աշտանակ, բոլոր ոսկիներից ավելի պատվական, որ իմանալի լույսը քո մեջ որպես հրագունդ՝ յոթնաճառագայթյան փայլումով աշխարհին որպես լույս բացավառեցիր։

Օրհնված ես, սուրբ փայտ, աննյութ կամուրջ, որովհետև մարդկանց մահից դեպի կյանքը բերելով անցկացրիր։

Օրհնված ես, սուրբ փայտ, իմանալի մագաղաթ, որովհետև քո վրա անջնջելի կերպով գրվեց մեր ազատության և որդեգրության ուխտը, ոչ թե գրող թանաքով, ոչ էլ Աստուծո մատով ձևացած գրով, այլ է՛լ ավելի անպատմելի՝ նրա ժառանգակցի՝ Աստուծո Որդու՝ արյունով։

Օրհնված ես, սուրբ փայտ, իմանալի վեհնարար գավազան սուրբ հովվին, որովհետև քեզանով Եկեղեցու անարատ ոչխարները ընտրեցիր։

ոլորվելով պատորոշվում են, վերծ՝ ապականողից, պաշտպանված՝ գազանից, և աստվածային բարկության սրի մահից ազատված։

Օրհնված ես, սուրբ փայտ, անբարբառ բարեխոս, հրեշտակների ցուցիչ, նրանց անտեսանելի Տիրոջ փառքի սրբություն, եկեղեցու փառք, առաքյալների պարծանք, մարգարեների ապացույց, մարտիրոսների պսակ, քահանաների շնորհաբաշխություն, վարդապետների հավատի կանոն։

Թագավորների հաղթություն, իշխանների քաջության հույս, քրիստոսասեր զորքերի առաջապահ, ախոյանների քաջալերություն, նահատակների զորավիգ, վտանգվածների օգնական, պարտվածների ապավեն, տառապյալների կարողություն, հալածվածների ապաստան, փախստականների պատսպարան, խռովյալների խաղաղարար, վշտացածների մխիթարություն, ուրախացողների գոհություն։

Հարուստների զգուշացուցիչ, աղքատների անկողոպտելի գանձ, անզգամների զգաստություն, ստահակների խրատ, դատարկապորտների ճահանջ, կույսերի զարդ, ամուսնացածների կնիք, մանուկների պահապան, երիտասարդների դաստիարակ, ծերերի հանգստարան, ճանապարհորդների առաջնորդ, հոգնածների հանգիստ, նավորդների նավահանգիստ, մոլորվածների դարձ, տառապյալների ապահովության հարկ, այրիների ակնածություն, որբերի խնամող։

Կրոնավորների պարիսպ, ճգնավորների ժուժկալություն, ապաշխարողների աղոթք, հիվանդների բժշկություն, դևերի սարսափ, հավատացյալների ձեռքում պատրաստ զենք, մեղավորների քավարան, անմեղների պահապան, ողջերի փրկության միջոց, մեռելների հիշատակի հույս։

(Դավիթ Անհաղթից, քաղվածաբար)